



## ՏՈՒՐՄԻ ՀՈՏՈՎ ԾԱՂԻԿԸ

Ծաղիկները հոտ կ'արձակեն յատուկ պատճառով մը: Անոնց այս հոտն է, որ կը գրաւէ միջատներուն ուշադրութիւնը, որպէսզի անոնք գան եւ բեղմնափոշին քաղեն: Այս ձեւով, ծաղիկէ ծաղիկ անցնելով, այս միջատները իրեն հետ պիտի փոխադրեն բեղմնափոշին եւ օգնեն, որ բոյսերը բազմապատկուին...: Անոնց հոտը կը ծառայէ նաեւ քարշանք յառաջացնելու գիշատիչ անասուններուն մօտ՝ անոնց հեռու պահելու համար:

Իւրաքանչիւր ծաղիկ ունի իր հոտը: Կարգ մը ծաղիկներ ունին կիտրոնի հոտ, փոշիի, մեղրի, կուպրի, հնդկընկոյզի, համեմներով կարկանդակի... իսկ քոսմոս աթրոսանկինեուս բոյսը ունի տուրմի հոտ: Նոյնիսկ անոր գոյնը տուրմի գոյնին կը նմանի, որով հետեւ ան շատ մութ կարմիր, գրեթէ սրճագոյն է: Դժբախտաբար, քոսմոս շոքոլայ ծաղիկը չունի իսկական տուրմի համը: Ան ուտելի չէ:

Քոսմոս տուրմը միակ ծաղիկը չէ, որ տուրմի հոտ ունի: Կան առնուազն հինգ ուրիշ բոյսեր, որոնք կ'արձակեն նաեւ այս անուշ հոտը. անոնց կարգին է Պերլանտիերա Լիրաթան, որուն ծածկանունն է «տուրմի կաթիլ»:

## Գիտե՞ր թէ

\* Արում Թիթանը աշխարհի ամենէն մեծ ծաղիկն է: Անոր հասակը կրնայ հասնիլ մինչեւ 3 մէթրի: Ասիկա անոր միակ մըրցանիշը չէ. ան նաեւ աշխարհի ամենէն գէշ հոտը ունեցող ծաղիկն է: Երբ ան կը ծաղկի, ան կ'արձակէ փտած միսի հոտ:

\* Տուրմը վտանգաւոր է շուններուն եւ կատուներուն համար, հետեւաբար անոնց բնաւ տուրմ պէտք չէ տալ:



# ԿԿՈՒ

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԹԵՐԹԻԿ



Թի 18


ՄԱՅԻՍ Ա. 2018

## ՓՈՔՐԻԿ ԱՍՏՂԱՆԱՒՈՐԴ

Ճագ 9 տարեկան փոքրիկ ամերիկացի մանչ մըն է: Ան պատասխանած է ամերիկեան անջրպետի գործակալութեան՝ ՆԱՍԱ-ի ծանուցումներէն մէկուն: Իր նամակին մէջ Ճագ բացատրած է, թէ ինչո՞ւ ինք շատ լուրջ թեկնածու մըն էր գործակալութեան մոլորակներու պահպանութեան սպայի պաշտօնին համար *«Իմ քոյրս կ'ըսէ, որ ես արտերկրային էակ մըն եմ, հետեւաբար ես շատ լաւ ծանօթ եմ անջրպետին եւ արտերկրային էակներու վրայ բազմաթիւ ծապաւէններ տեսած եմ»:*

Ճագ այդ պաշտօնը չստացաւ, որովհետեւ բաւարար փորձառութիւն չունէր մոլորակներու պահպանութեան մարզին մէջ, գիտնալով, որ մոլորակներու պահպանութիւնը չի նշանակեր արտերկրային էակներու դէմ պայքարիլը, այլ՝ պահպանում հիւանդութիւններ պատճառող մանրէներու դէմ:

Սակայն, հակառակ ասոր, ՆԱՍԱ-ն հեռաձայնած է Ճագին՝ անոր հետաքրքրուելուն համար շնորհակալութիւն յայտնելու եւ զայն քաջալերելու, որ շարունակէ շատ լաւ աշխատիլ դպրոցը՝ օր մը անջրպետի գործակալութեան մէջ աշխատելու համար:



Թիւ 18 մասնաւած՝ Ռիթա Կարտան-Տիբոլթեան  
ՆԿԱՐԱԾԱՐՈՂԵՑ՝ ՌԱՅՅԻ ԲԵՇԻՇԵԱՆ





# ԱՆՅԱԲԱՏԱԼԻ, ԲԱՅՑ ԻՐԱ՛Ւ

- \* Գոյութիւն ունին ձուկի 130 տեսակներ, որոնք ժամանակ կ'անցընեն նաեւ ցամաքի վրայ:
- \* Մէկ ամսուան ընթացքին պատահած երկրորդ նոր լուսինը կը կոչուի սեւ լուսին: Սեւ լուսինները կը յայտնուին մօտաւորապէս ամէն 32 ամիսը անգամ մը:
- \* Կարգ մը մծեղներ կը նախընտրեն կոկոս արիւնը մարդոց արիւնէն:
- \* Գոյութիւն ունի ջրախոտի տեսակ մը, որ ինքզինք կ'ուտէ երբ ուտելիքը պակսի:
- \* Միացեալ Նահանգներու եւ Քանատայի միջեւ սահմանը կ'անցնի գրադարանի մը մէջտեղէն:
- \* Աւստրալիա մօտաւորապէս 1.5 մէթր դէպի հիւսիս սահած է վերջին 22 տարիներուն ընթացքին:
- \* Առաջին անասունները, որոնք անջրպետ դրկուեցան պտուղի մանր ճանճեր էին:
- \* Շերեփուկները կրնան ջուրին մէջ ապրիլ մինչեւ երկու տարի:
- \* Այծերը մարդոց հետ կը հաղորդակցին անոնց աչքերուն մէջ նայելով:
- \* Կարգ մը թռչուններ տակաւին հակիրթներուն մէջ գտնուող իրենց ձագերուն հետ «կը խօսին»:
- \* Գիտնականները գտած են մնացորդները նախապատմական կարիճի մը, որուն մեծութիւնը կը հասներ մարդու հասակին:



Փորձէ գտնել այս համեղ պաղպաղակէն դուրս գալու ճամբան:



Կրնա՞ս ամբողջացնել պատկերը՝ հետեւելով տուփիկներուն:

- Առաջարկած գոյներովս եթէ ներկես շատ գեղեցիկ պատկեր մը պիտի ունենաս:
- 1.- Մոխրագոյն 2.- Դեղին
  - 3.- Կարմիր 4.- Բաց սրճագոյն
  - 5.- Կանաչ



# ԵՐԿՈՒ ԹԻՒԵՐ

Օր մը հողագործ Թովմասը իրենց գիւղի ուսուցիչին հետ նաւակով կը ճամբորդէր:

Թովմաս կը գանգատի թէ իրեն դրացի Ղազարը, շատ աւելի լաւ եւ առատ բերք կ'ունենար ամէն տարի:

- Ես ալ,- կ'ըսէր Թովմաս,- իրեն չափ կ'աշխատիմ, եւ աւելի ուժեղ եմ, բայց ինչո՞ւ իր բերքը իմ բերքէս աւելի առատ ու ընտիր կ'ըլլայ:

Ուսուցիչը, որ կը լսէր անոր գանգատները, ըսաւ.

- Թովմա՛ս, ատոր մէջ զարմանա-

լի բան չկայ Ղազարը միշտ քու բերքէդ աւելին ու լաւը պիտի ունենայ:

- Բայց ինչո՞ւ,- զարմացաւ Թովմաս,- չէ՞ որ ես իրմէ շատ կ'աշխատիմ ու իրմէ աւելի առողջ եւ ուժեղ եմ:

- Այո՛, բայց միայն ուժն ու առողջութիւնը չեն բաւեր մարդու: Ուրիշ բան մըն ալ պէտք է, բան մը՝ զոր Ղազար ունի, իսկ դուն չունիս:

- Ի՞նչ բան:

- Ուսում:

- Ինչի՞ պէտք է ուսումը, երբ ես առողջ ու զօրաւոր եմ,- առարկեց Թովմաս:

- Մինա՛ս,- ըսաւ ուսուցիչը՝ նաւա-

վարին դառնալով առաջ տանելու համար ի՞նչ կ'ընես:

- Երկու թիւրը մէկտեղ կը քաշեմ,- պատասխանեց նաւավարը:

- Մէկ թիւն չի՞ բաւեր:

- Ո՛չ, նաւակը ծուռ կ'երթայ ու շուտ չի հասնիր:

Ուսուցիչը դարձաւ Թովմասին:

- Լսեցիր, չէ՞,- ըսաւ անոր,- ինչպէս որ նաւակը մէկ թիով չի կրնար լաւ սահիլ, այնպէս ալ մարդ միայն առողջութեամբ եւ ուժով չի կրնար յառաջդիմել: Ուսում ալ պէտք է, ապա թէ ոչ դանդաղ կը յառաջնայ ան: Տե՛ս, Ղազարը, որ կարդալ

գրել գիտէ՝ գիրքերուն շնորհիւ կը հասկնայ թէ լաւ ցորեն հասցնելու համար ինչպէս պէտք է աշխատիլ եւ ինչ հնարքներ պէտք է գործադրել:

Դուք որչափ ալ շատ բան գիտնաք, գիրքերը միշտ ձեզմէ աւելի շատ գիտեն: Ղազարը գիրքերուն կը հետեւի եւ հակառակ քեզմէ մարմնապէս տկար ըլլալուն, շատ աւելի լաւ ու առատ բերք կ'ունենայ ամէն տարի:





# ԺՈՔՈՆՏԸ ո՞՞ թԱՐԹԻՉ, Ո՞՞ ԱԼ ՅՕՆՔ ՈՒՆԻ

Ժոքոնտ անունով ճանչցուած Մոնա Լիզայի դիմանկարը նկարուած է 1503 թուականին շուրջ, Լեոնարտէ Տա Վինչիի կողմէ:

Հակառակ իր փոքրիկ չափին (77x53սմ.)՝ այս իւղաներկը մրցանիշեր կը կոտորէ, որովհետեւ օրական աւելի քան 15 հազար անձեր կու գան զմայլելու անոր խորհրդաւոր ժպիտով:

Այս դիմանկարին իւրայատկութիւններէն մէկն ալ այն է, որ Մոնա Լիզան ո՛չ թարթիչ, ո՛չ ալ յօնք ունի: Կայ երկու վարկած՝ բացատրելու այս խորհրդաւոր կէտը: Ըստ մէկ ենթադրութեան, իսկական Մոնա Լիզան եր դէմքին մագերը կը հանէր, արդեօք 16-րդ դարուն նորո՞յթ եր թարթիչ եւ յօնք չունենալը: Ուրիշ ենթադրութիւն մը կ'ըսէ, որ այդ մանրամասնութիւնները գծուած են գեղանկարին վրայ, սակայն անոնք անհետացած են ժամանակի ընթացքին: Շնորհիւ յառաջդիմած արհեստագիտութեան՝ խոր ուսումնասիրութիւններ կատարած են դիմանկարին վրայ, երկրորդ ենթադրութիւնը աւելի հաւանական կը թուի:

Գիտէ՞ր, որ...

1911-ին Ժոքոնտը գողցուեցաւ Լուվրի թանգարանէն: Ժամանակ մը Կիյոմ Ափոլինէր բանաստեղծը եւ արուեստագետ Փապլօ Փիքասոն կասկածի տակ առնուեցան: Սակայն երկու տարի ետք իսկական գողը ձերբակալուեցաւ:

Վենչենզօ Փերուճիա իտալացի ապակեգործ մըն էր, որ ժամանակ մը աշխատած էր թանգարանին մէջ:



# ԶԱՆԱԶԱՆ... ԶԱՆԱԶԱՆ

## Հոտառութեան ժամերը

Ըստ 40 պատանիներու վրայ կատարուած ուսումնասիրութեան մը, օրուան ընթացքին անոնց հոտառութիւնը ամենէն զգայունը կ'ըլլայ իրիկունը: Առտուան ժամը 6:00-էն 10:00-ի միջեւ հոտառութիւնը նուազագոյնի կ'իջնէ:

## Թիւեր

Սապատաւոր կէտը տարեկան 25 հազար քմ. կը կտրէ ամառը զով շրջաններու մէջ անցընելու համար իսկ ձմեռը՝ տաքուկ շըրջաններու:

## Արհեստավարժներու լողաւազան

Աշխարհի ամենէն խոր ունկ լողաւազանը կը գտնուի Իտալիոյ մէջ: Անիկա կոչուած է «Տիփ Ծոյ» (խորունկ ուրախութիւն) եւ ունի 40 մէթր խորութիւն:

Դո՞ւն ալ կ'երագես անոր ջուրերուն մէջ լողալ: Դժբախտաբար մեզի համար ասիկա անկարելի է: Անիկա յատկացուած է միայն արհեստավարժ լողորդներու, որոնք հոն կը մարզուին: Սակայն այցելուներ կրնան դիտել այս լողորդները՝ ապակիով օժտուած ընդծովեայ քարայրի մը ընդմէջէն: Անիկա կը նման հսկայական արջուարիոմի մը ուր ձուկերու փոխարէն՝ մարդիկ կը լողան:

